ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր

ՉՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ 1919 Թ.

1918 թ. մայիսյան հերոսամարտերում թուրքական բանակների կրած պարտությունները թուրքերին ստիպեցին միառժամանակ հրաժարվել Հայաստանի Հանրապետության դեմ նոր ռազմական արշավանքներ ձեռնարկելուց: Մեկ տարի անց, սակայն, թուրքական նկրտումները նոր դրսևորումներ ստացան: Վերջիններս փոխել էին իրենց մարտավարությունը եւ ակնհայտ արշավանքի փոխարեն ընտրել էին ավազակային հարձակումների մարտավարությունը եւ փաստորեն չհայտարարված պատերազմ էին հայտարարել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը: Ասվածի ակնառու ապացույցն են հայ-թուրքական սահմանի հարեւանությամբ գտնվող Սուրմալու գավառում 1919 թվականին ծավալված իրադարձությունները: Այսպես, հայաստանյան այդ ժամանակի թերթերից մեկի բնութագրմամբ՝ «սահմանամերձ գավառներում երերուն եւ անհանգիստ տրամադրությունները ավելի են խորացել. մեր զորքերի ճակատից հեռանալը նպաստավոր իրավիճակ է ստեղծել մեր հարեւանների համար. կատարվող ավազակային շարժումները անմիջականորեն կապ եւ առնչություն ունեն ճակատի դեպքերի հետ»[1]: Գրեթե նույն միտքն էր արտահայտվում Հայաստանի ռազմական շտաբին ուղղված հեռախուզական այս հաղորդագրության մեջ. «Սուրմալուի շրջանում մուսուլմանական զինված ուժերի կազմակերպումը նպատակ ունի հակահարված տալ հայկական բանակին եւ կանխել գաղթականների տեղաշարժը՝ Սուրմալուից թուրքերի հեռանալուց հետո: Տեղի մուսուլմանության կազմակերպման համար եռանդուն ջանքեր է գործադրում նախկինում ռազմական նահանգապետ Մեհմեդ բեկը Իգդիրում եւ Սուլեյման բեկը Ղամարլուում: Իսկ ընդհանուր առմամբ, մուսուլմանները բաժանվել են երկու խմբի. նրանց մի մասը խիստ ռազմատենչ է, իսկ մյուս մասը ցանկանում է դրացիական հարաբերություններ ունենալ հայերի հետ»[2]: Առաջինների համարձակությունը հասել էր նրան, որ ինչպես նշվում է հաղորդագրությունում, «ռազմամթերք եւ զենք ձեռք բերելու նպատակով նրանք նույնիսկ հարձակվել են նահանջող թուրքական զորամասերի վրա»[3]:

Հաղորդագրության մեջ հստակ նշվում են նաեւ թուրք-քրդական կազմավորումնե-

1 «Աշխատանք», 1918, թ. 97:
2 Հայաստանի ազգային արխիվ ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.252, թ.1:
3 Անդ:

րի կենտրոնացման վայրերը: Այսպես, համաձայն դրա՝ Արալիխում հավաքվել էին 2000 մարդ Ալի-Միրզայի հրամանատարությամբ, Դաշբուրունի մերձակայքում՝ 1500, որոնց կեսը հեծյալներ էին (Սաֆար-Ալիի գլխավորությամբ), Արզան-Կարեյում Ահմեդ-Աղայի հրամանատարությամբ հավաքվել էին 400, իսկ Գյուլլուջայում՝ 1500 քրդեր (հրամանատար՝Յուսուֆ բեկ): Փառնաուտում տեղավորված 500 քրդերի տրամադրության տակ կար նույնիսկ 3 հրանոթ: Այս խումբը գլխավորում էին Օմար աղան եւ Շամիլ բեկը: Բացի դրանից՝ Փառնաուտ-Կաղզվան ճանապարհի առանձին հատվածներում գործում էին 1000-ի հասնող քրդեր՝ Քերիմ եւ Ֆեպա բեկերի գլխավորությամբ, որոնց միացել էր նաեւ վերջինիս հայր Համիդ բեկը[4]: Այսպիսով, եթե գումարենք հաղորդագրության տվյալները, ապա ստացվում է 7.000-ի հասնող ռազմական ուժ: Այլ խոսքով, ինչը հաստատում են նաեւ բազում արխիվային վավերագրեր, հակահայկական ուժերի կենտրոն է հանդիսացել Բաշքենդի շրջանի Արալիխ գյուղը: Թուրքերի հեռանալուց հետո Արալիխը դառնում է մուսուլմանների կենտրոնական: Այստեղից էին իրենց գործակալների միջոցով թուրքերը հրահանգներ տալիս տեղերին. «...Իգդիր եւ Ուլուխանլու (ներկայիս Մասիս քաղաքը՝ Հ.Հ.) են ուղարկվում գործակալներ տեղի մուսուլմաններին ոտքի հանելու համար,- ասվում էր Սուրմալու գավառի իրավիճակը տեղեկացնող արխիվային մի վավերագրում: - Կազմավորված Արալիխ - Շարուր մուսուլմանական կոմիտեն որոշել է Սուրմալուում ստեղծել այնպիսի իրավիճակ, ինչպես Դավալուում է, այդ տարածքները միացնել իրար, հետո նաեւ Զանգիբասարի շրջանը»[5]: Որքանով կարելի է դատել այս փաստաթղթից, թուրք-թաթարական ելույթները բավականին լուրջ էին: Ավելին, հուշագրից երեւում է նաեւ, որ այդ շրջանների գրավման վտանգը բավականին իրատեսական է եղել. «Ներկա պահին, հայկական ուժերը զբաղեցրել են Իգդիրի եւ Կողբի շրջանը, սակայն եթե արալիխցիները որեւէ գործողություն ձեռնարկեն,- շարունակվում էր փաստաթղթում, - ապա վերջիններս կհայտնվեն շրջապատված վիճակում եւ ողջ Սուրմալուն կլինի նրանց ձեռքում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ ենք գտնում անհապաղ գրավել Արալիխը»[6]:

Հակահայկական գործողություններում, բնականաբար, ամենից ակտիվը, եղել են թուրքերը: Վերջիններիս գործակալները ակտիվ գործունեություն են ծավալել գրեթե ողջ Հայաստանի տարածքում: Իսկ Սուրմալուն, որպես սահմանակից շրջան, այդ տեսակետից առավել հեշտացրել է թուրքերի գործը: Այսպես, 1919 թ. փետրվարի 18-ին հայկական դիվիզիայի հրամանատարին պողպորուչիկ Գասպարյանցի ներկայացրած հաղորդագրության համաձայն, տեղի մահմեդական բնակչության տրամադրության մեջ ակնհայտ փոփոխություն էր նկատվել. «թուրք սպա Ջեւդեդի Արալիխ ժամանելուց հետո մուսուլմանների տրամադրությունը բարձրացել է,- ասվում էր զեկույցում: - Նա նույնիսկ հասցրել է գաղտնի լինել Երեւանում եւ տեղեկություններ հավաքել մեր մասին: Այժմ արդեն նա ներկայանում է որպես գնդապետ: Բավականին լավ հռետոր է եւ կարողանում է իր կողմը քաշել իր ցեղակիցներին: Իմ գործակալներից մեկը ներկա է եղել նրա ելույթին

4 Անդ, թ.2:
5 Անդ, գ.252, թ.33:
6 Անդ, թ. 34:

Գյոդակլու գյուղում, որտեղ էլ վերջինս ասել է, թե իրենք պայմանավորվածություն ունեն Մակուի եւ Շարուրի թուրքերի հետ՝ ապստամբության ժամանակ օգնություն ցույց տալու խնդրում»[7]:

Այդ տարիներին Սուրմալուի վրա հարձակման գլխավոր թիրախներից մեկը հայկական Կողբ գյուղն էր: Այսպես, Իգդիրի գումարտակի հրամանատար, շտաբս-կապիտան Աբրոյանցը հաղորդում է, որ քուրդ Յուսուֆ բեկը, հավաքելով 3 հազարի հասնող հեծյալ եւ հետեւակ քրդեր, Աբաս-Գյոլից պատրաստվում է հարձակվել Կողբի վրա: 300-ի հասնող տեղի աշխարհազորայինները Սմբատի գլխավորությամբ դիրքեր են գրավում դիմագրավելու քրդերի հարձակումը: Հաշվի առնելով իրավիճակը՝ գումարտակի հրամանատարը նրանց օգնության է ուղարկում մի դասակ՝ 2 գնդացիրով[8]:

Կողբի ծանր վիճակի մասին է վկայում նաեւ Իգդիրից 1919 թ. հունվարի 31-ին բանակային շտաբին ուղղված գեներալ-մայոր Դոլուխանյանի զեկուցագիրը. «Կողբը վտանգի մեջ է: Դրությունը ավելի կբարդանա, եթե տեղի բնակիչներին օգնություն չտրվի: Հայերի եւ եզդիների 30 տուն արդեն հեռացել է Բայազետ: Քրդերը իրենց խուստումներին հակառակ, գազանաբար ոչնչացրել են բոլորին: Ներկայումս նրանց մի մեծ բազմություն շրջապատել է գյուղը եւ սպառնում է բոլորին ոչնչացնել: Բնակչությանը հանգստացնելը շատ դժվար է»[9]:

Կողբն իսկապես իր աշխարհագրական դիրքի պատճառով հայտնվել էր ծանր վիճակում: Գյուղը շրջապատված էր թուրքական եւ քրդական բնակավայրերով, ուստի նրանց հայերի դեմ տրամադրելը թուրք գործակալների համար առանձին դժվարություն չէր: «Շամիլ բեկ Շամշադինովը Կողբի շրջանում ակտիվ քարոզ է տանում մուսուլմանական բնակչության մեջ՝ նրանց տրամադրելով հայերի դեմ,- ասվում էր բանակային շտաբ ուղարկված զեկուցագրերից մեկում: - Նա հանդիսանում է նաեւ այսպես կոչված հարավ-արեւմտյան կառավարության սահմանային պահակային ծառայության պետը: Նրան ձերբակալել հնարավոր չէ, քանի որ Կուլփիի շրջանը չի ենթարկվում Հայաստանի իշխանություններին»[10]: Շամշադինովի կատարած ավազակությունների մասին հաղորդագրություն էր զետեղել նաեւ «Աշխատավոր» թերթը. պարզվում էր, որ այս հրոսակը բավականին հետաքրքիր կենսագրություն է ունեցել. «Քրդական պարագլուխներից,- գրում է թերթը,- հատկապես վտանգավոր է Շամիլ բեկ Շամշադինովը՝ Օրգովի հայտնի կալվածատերն ու ցարական ռեժիմի ժամանակ բարձր պաշտոնների արժանացածը: Այժմ նա դարձել է գործող բոլոր ավազակախմբերի գլխավորն ու հրամանատարը: Հունվարի 13-ին /1918 թ.-Հ.Հ./ Շամշադինովի մարդիկ կողոպտեցին ճակատից վերադարձող 150 ուղտերը եւ սպանեցին մի քանի ուղտապանների: Հաջորդ օրը, ամսի 14-ին, նույն այս քրդերը կողոպտեցին ֆրոնտից վերադարձող մոլոկանների ֆուրգոնները»[11]:

---

7 Անդ, թ.8:
8 Տե՛ս անդ, գ.252, թ.1:
9 Անդ, թ. 3 /200, 252/:
10 Անդ, գ. 200, թ.9:
11 «Աշխատավոր», 1918, թ. 14, 2 փետրվարի:

Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ 1917 թ. դեկտեմբերին Երզնկայում կնքված զինադադարից հետո, երբ ռուսական ողջ զինուժը բռնել էր փունդարձի ճամփան, քրդերն այդ հանգամանքն անմիջապես օգտագործել են. ստեղծված անիշխանության պայմաններում ավազակությունների ու թալանի լայն հնարավորություն ընձեռվեց Սուրմալուի թուրք-քրդական հրոսակներին: Սկզբում վերջիններիս հարձակման թիրախ դարձան ռուսական ռազմաճակատը լքող զումակները, հետո արդեն, երբ նրանց ահռոժակը բացվեց, հարձակվեցին գավառի հայկական գյուղերի վրա. թալանիր որքան ուզում ես եւ որքան կարող ես. «Հունվարի 17-ին,- գրում է նույն «Աշխատավորը»,- Շամշադինովի հրոսակախմբերը հարձակում գործեցին Իգդիր-Մովա գյուղի վրա եւ փորձ արեցին տանել ոչխարի հոտը՝ այս անգամ սակայն օգնությունը ժամանակին հասավ եւ քրդերը փախուստի դիմեցին»[12]:

Սուրմալուում հայտնի մյուս հրոսակը նաջաֆալեցի Քալբլահին էր: Վերջինս հարեւան թուրքական գյուղերի բնակիչներին ծեծի սպառնալիքի տակ պարտադրում էր վաճառել իրենց անասունները եւ գենք գնել:

Ինչ խոսք, Հայաստանի իշխանություններն աշխատում էին հնարավորին չափ անհետեւանք չթողնել հայկական գյուղերի վրա հարձակումների մասին հաղորդագրությունները, թեպետ պետք է նկատել, որ ոչ բոլոր դեպքերում էր հաջողվում օպերատիվ կերպով արձագանքել կատարվածին: Այսպես, ստացված այդպիսի մի հաղորդագրության ի պատասխան, հայկական դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Սիլիկյանը 1919 թ., փետրվարի 19-ին հեռագրում է. «Տեղեկությունները համարում եմ բավականին վտանգավոր, եւ շուտով Իգդիր կուղարկվի ոստիկանության ռեզերվից մի գումարտակ եւ երկու լեռնային հրանոթ»[13]:

Մեզ հաջողվեց հետամուտ լինել այս հեռագրի կատարման ընթացքին եւ արխիվային փաստաթղթերից մեկում գտանք արձագանքը: Այն թվագրված է 9-ը ապրիլի 1919 թ.«Առաջին դիվիզիայի հրամանատարին: Միլիցիայի 3-րդ վաշտի պետից: - Ձեր կարգադրության համաձայն իմ վաշտի 53 զինվորներով շարժվեցի դեպի Մարգարա գյուղը՝ պաշտպանելու քրդերի հարձակումներից եւ ուղեկցելու Երեւանից ժողովրդի համար գարու բարձած սայլերը: Ես կանգ առա Իգդիրից 8 վերստ հեռավորության վրա պահակակետի մոտ: Լեռներում նկատեցի հարձակմանը պատրաստ քրդերի: Ես գործի դրեցի զինվորական բոլոր միջոցները եւ ամեն կողմ հետախույզներ ուղարկեցի, եւ քրդերը սիրտ չարեցին հարձակվել: Գարիով բարձած 18 սայլը հասցրեցի Իգդիր»[14]:

Թուրք-քրդական անհնազանդության ամենից տարածված ձեւն, իհարկե, տեղական իշխանություններին անհնազանդություն հայտնելն էր. «Չմոռանամ Ձեզ հաղորդել,- ասվում էր օրինակ Սուրմալուի գավառական կոմիսարի 1919 թ. հունվարի 25-ի զեկույցում,- որ Սուրմալուի գավառում մեր իշխանության տիրապետության սահմանները շատ նեղ են: **Իգդիրից դեպի հարավ եւ դեպի արեւելք 6-7 վերստ հեռավորության**

12 Անդ:
13 Անդ, թ. 8:
14 ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ. 63, թ. 9:

վրա գտնվող թուրքական եւ քրդական շրջանները չեն ենթարկվում մեր իշխանությանը (ընդգծումը մերն է-Հ.Հ.): Նույն պատկերն է նաեւ Կողբի շրջանում»[15]:

Բնականաբար, ազգամիջյան այս կռիվների անբաժան մասն են կազմել խաղաղ բնակչության թալանն ու կողոպուտը: Նման բռնանդակության հաղորդագրությունների կարելի է հանդիպել իրավիճակը բնութագրող արխիվային գրեթե յուրաքանչյուր վավերագրում: Այս մեկն օրինակ, գրվել է 1919 թ. մարտի 13-ին, Էջմիածնի գավառական կոմիսարի ձեռքով. «Ինձ մոտ էին եկել Սոգյութլու գյուղի բնակիչներ Նահապետ եւ Եղիազար Գրիգորյանները եւ Տիգրան Կարապետյանը: Նրանք հաղորդեցին, որ մարտի 12-ի կեսօրին իրենց վրա են հարձակվել 200-ի չափ քրդեր եւ սպանելով իրենց համագյուղացի Բաղդասար Խաչատրյանին եւ Տաճատին եւ էլի 3 զինվորների, իրենց հետ տարել են ողջ հացահատիկը» [16]:

Իսկ այդ ընթացքում թուրք-թաթարական խռովությունների ալիքը գրեթե հասնում է իր գագաթնակետին. մի պահի, երբ սպառնալիքը այն ասպիճան իրական էր դարձել, որ վերջիններիս կողմից նույնիսկ դրվել էր մայրաքաղաք Երեւանի գրավման հարցը: Համենայն դեպս, մեր ձեռքի տակ եղած այս փաստաթուղթը հայոց բարձր ատյանների արձանագրություն է. 1919 թ. օգոստոսի 15-ի պառլամենտի նիստում ի պատասխան սոցիալիստ-հեղափոխականների հարցադրմանը, որը վերաբերում էր Էջմիածնի եւ Սուրմալուի գավառներում տիրող իրավիճակին, ՀՀ ներքին գործոց նախարարը հետեւյալ պատկերն էր ներկայացնում. «Էջնիածնի եւ Սուրմալուի շրջաններում այլանդակ դեպքեր են կատարվում: Անհերքելի փաստ է, որ մուսուլման ազգաբնակչության մեծ մասը ենթարկվելով դրսի ագիտացիային, իր գործակալների միջոցով դավեր է հյուսում մեր պետության դեմ: Մենք ունենք ստուգված փաստեր, թե ինչպես է ծրագրված եղել Երեւանի առումը: Իրենց նպատակին հասնելու համար,- շարունակում է այնուհետեւ ՆԳ նախարարը, - նրանք վճռել էին այրել Մարգարայի կամուրջը եւ շարժվելով Էջմիածնի, Սուրմալուի եւ Զանգիբասարի կողմից, օղակել Երեւանը եւ մի քանի ժամվա ընթացքում գրավել: ...Էջմիածնի գավառի թաթար ազգաբնակչությունը երկու մասի է բաժանվել. ապստամբության կողմնակից տարրերը իրենց ունեցվածքով, կանանցով ու երեխաներով տեղափոխվել են իրենց համար ապահով վայրեր, իսկ տղամարդիկ խմբվելով Արաքսի մյուս ափին, պատրաստվում են հարձակվել Իգդիրի վրա»[17]:

Բայց մի՞թե հանրապետության իշխանությունները չեն կարողացել նախապես կռահել վերջիններիս մտադրությունները եւ թույլ են տվել, որ «ապստամբության կողմնակից տարրերը», ինչպես նախարարն է արտահայտվել, ազատ հեռանան հանրապետությունից: Մեր կարծիքով, հենց նրանք պետք է պատանդ պահվեին իրենց բնակության վայրերում, ինչը, կարծում ենք, կկանխեր ինչպես այդ, այնպես էլ իրենց ցեղակիցների անարգել մյուս տեղաշարժերը հենց թեկուզ կենտրոնական իշխանությունների քթի

15 Անդ, ֆ.205, ց.1, գ.539, թ.11:
16 Անդ, ֆ. 200, ց.1, գ.252, թ.34:
17 Անդ, ֆ.198,ց.1, գ.35, թ.12:

տակ. «Վերջիններս հասցնում են պաշարել Էջմիածին կայարանը այն ժամանակ, երբ կայարան է ժամանում գնդապետ Հասկելի գնացքը եւ նա ականատես է լինում, թե ինչպես 400-ի չափ հասնող թաթարներ շրջապատել են կայարանը»[18]:

Եւ այդուհանդերձ, Հայաստանի հանրապետության համար այդ ծանր օրերին Սուրմալուն վերածվեց ռազմաճակատային գծի, եւ այնտեղ ծավալված իրադարձությունները մարտականից գրեթե չէին տարբերվում: Ինչեւէ, ստեղծված իրավիճակը պատմագիտական վերլուծության կարիք ունի եւ այս տեսակետից տրամաբանական հարց է ծագում. ինչի՞ց սկսվեց այդ ամենը: Մեզանում, իհարկե, բացատրություններ գտնվել են, սակայն մեր կարծիքով, դրանք լիովին համոզիչ չեն: Ուստի, մենք կփորձենք ներկայացնել հարցի մյուս կողմերը, եզրահանգումները թողնելով մեր ընթերցողին, թեպետ առանց դրա էլ դրանք հասկանալի են: Տեղի հայության եւ թուրքերի միջեւ ազգային թշնամանքի առաջացման պատասխանատվության մի զգալի մասը ընկնում է թուրք - քրդական պարագլուխների վրա: Արխիվային բազմաթիվ փաստաթղթեր վկայում են թուրքական բանակի սպաների եւ նրանց գործակալների կողմից Սուրմալուի մահմեդական բնակչության մեջ ծավալած նպատակաուղղված քայքայիչ գործունեության մասին: Եւ այն, որ այդ աշխատանքը իր բացասական հետեւանքներն ունեցավ, անկասկած է: Սակայն արխիվային փաստաթղթերի մանրամասն ուսումնասիրությունը մեզ բերում է նաեւ այն համոզման, որ այդ ամենը հիմնախնդրի թեպետ կարեւոր, սակայն միակ բացատրությունը չէ: Մեր կարծիքով, այս իրավիճակի ստեղծման խնդրում պակաս դեր չեն խաղացել Սուրմալուում եւ հանրապետության մյուս վայրերում ընթացող ներքին անկայունության գործընթացները:

Ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում Սուրմալուի գավառի կոմիսարի՝ հանրապետության ներքին գործոց նախարարին ուղղված զեկուցագրի հետեւյալ տողերի վրա, որը թվագրված է 30-ը օգոստոսի 1919 թ. **«Բոլոր ներքին անցքերը եւ եթե կուզեք անիշխանությունը հեղափոխությանը վերագրելը ոչ միայն կարճատեսություն է, այլեւ ուղղակի անխելքություն** /ընդգծումը մերն է-Հ.Հ./»[19]:

Այդպես եղավ նաեւ Սուրմալուում. «...Իրար եւրեից տեղեկություններ են ստացվում ասկյարների, թուրքերի ու քրդերի ասպատակությունների մասին, իսկ մեր տաք գլուխները ճառեր են արտասանում «մահ կամ ազատություն»: Եւ ցավալին այն է,- շարունակում է գավառի կոմիսարը, որ այս տխուր պատմությանը մասնակից է դառնում տեղական ազգաբնակչությունը: Օգնության են հասնում կանոնավոր զորամասեր, եւ ճակատամարտը սկսվում է...»[20]:

Թուրք-թաթարական կռիվները ցույց տվեցին, որ մեր բանակը արդեն զենք-զինամթերքի պակաս ունի, ինչը բնականաբար, մտահոգում էր Սուրմալուի գավառի իշխանություններին. «Ռազմաճակատներում դրությունը հանգիստ է: Մենք գրանցել ենք 400 հոգու,

18 Անդ, թ.13:
19 ՀԱԱ, ֆ. 201, ց.2, գ.612, թ.2:
20 Անդ:

սակայն մեր ձեռքի տակ ունենք ընդամենը 70 հրացան: Փամփուշտի պակաս ևս ունենք: Ավելորդ զենք չկա նաև ջոկատում»[21]:

Այդուհանդերձ, Աբաս-Գյոլի և Կողբի շրջաններից հայկական ուժերի նահանջից հետո Իգդիրի համար ստեղծվեց չափազանց ծանր դրություն: 50 հազարի չափ հայություն սեղմվեց օղակի մեջ: Փաստորեն Իգդիրը հայտնվեց պաշարողական դրության մեջ և բոլոր կողմերից շրջապատված էր: Ամենից թույլ պաշտպանվածը քաղաքի հարավային մասն էր, որտեղից և սպասվում էին թուրքերի հիմնական հարձակումները: Իրավիճակն ավելի ծանրացավ, երբ թուրքերին միացան Մասիսի ստորոտում ապաստանած քրդերը: Միակ, այսպես կոչված, «կյանքի ճանապարհը» իգդիրցիների համար մնաց Իգդիր-Մարգարա խճուղին, որտեղից ստացվում էին ամեն տեսակի օգնությունները: Խնդիր էր առաջացել նույնիսկ տարհանել Իգդիրը: Այդ ընթացքում թուրքերն արդեն առաջացել էին դեպի Իգդիրի շրջան և սկսել էին իրենց ճանապարհին ընկած հայկական գյուղերի թալանը:

Այդ ամենի արդյունքում տնավեր եղան մահմեդական բնակչության աքցանում հայտնված հայկական Աբաս-Գյոլը, Մոլլա-Կամարը և Գյուլլուջան: Իսկ ամենամեծ հարվածը հասցվեց Կողբին և Դաշբուրունին, որտեղից մեծ գաղթ սկսվեց դեպի Արարատյան դաշտի գյուղերը, մեծմասամբ Էջմիածնի շրջանի գյուղեր: «Աբաս - Գյոլի շրջանի և Կողբի նահանջից հետո, Իգդիրի շրջանի համար ծանր դրություն ստեղծվեց: Հիսուն հազարի չափ հասնող հայ ազգաբնակչությունը սեղմված է օղակի մեջ և համարյա պաշարողական դրության մեջ է, ամեն կողմից շրջապատված թշնամի տարրերով: Ամենից շատ վտանգ է սպառնում հարավից: Արարատի ստորոտի քարքարուտ բարձունքներում և ձորերում ապաստանած քրդերից, որոնց միացել են նաև տեղական թուրքերը, սպառնում են Իգդիրին և Իգդիր - Մարգարա խճուղուն»,- ասվում էր Սուրմալուի գավառի կոմիսարի մեկ օր հետո ներկայացրած զեկուցագրում[22]:

Գավառի իշխանությունները փորձում են վերահաս վտանգի դեմն առնել. ուղեկալներ են կարգում թուրքական և քրդական գյուղերի մոտ: Սակայն դա չի օգնում. թուրք-թաթարական հարձակումները գնալով ավելի են սաստկանում. «Թաթարները և քրդերը այսօր ժամը 5-ին (25.08.1919թ.-Հ.Հ.) հարձակվեցին Դեվիկ-Դաղ ուղեկալի վրա: Փոխհրաձգություն է գնում: Հաղորդե՛ք Դրոյին, որ շուտափույթ ուժեր ուղարկի: Դրությունը լուրջ է»[23]: Նույն օրվա ժամը 6-ի հաղորդագրությունից. «Դեվիկ-Դաղի մոտ մարտերը շարունակվում են: Թաթարները և քրդերը մոտեցել են խճուղուն: Մերոնք նահանջում են: Ջոկատի հրամանատարը վիրավորվել է: Քյուլուլուկից երկու գումարտակ է եկել Իգդիր: Դրությունը բավականին լուրջ է: Մարգարայի կամուրջը պահպանող սասունցիները հեռացել են: Օգնություն է հարկավոր»[24]: Իսկ այս տեղեկությունը մեզ ուղղակի զարմացրեց. «Մարգարայի կողմից կամուրջը ականապատված է»[25]:

21 Անդ, ֆ.201, ց.1, գ.67, թ. 34:
22 Անդ, ֆ.201, ց.2, գ.607, թ.3:
23 Անդ, թ.18:
24 Անդ:
25 Անդ:

Գավառային կոմիսարի հերթական զեկուցագիրն ասում է. «Քրդերը եւ թուրքերը ժամը 9-ի սահմաններում (07.09.1919թ - Հ.Հ.) մոտեցել են Իգդիրին: Օգնության եկած երկու գումարտակները նրանց եւ են շպրտել Մալլաքլու եւ Դեվիկ-Դաղ: Իմ աչքի առաջ սպանվեց գումարտակի հրամանատար Պետրոս Չարուխյանը: Լուր ունեմ, որ քրդերը եւ թուրքերը շրջապատել են Դաշբուրունը: Կարակոյունլուի քրդերը թալանել են մեր միլիցիոներների պարենը եւ ռազմամթերքը եւ գնդակոծում են մեր դիրքերը»[26]:

Մեզ չհաջողվեց արխիվային վավերագրերից տեղեկություն քաղել թշնամու ռեալ զինուժի մասին, սակայն դատելով հայկական բանակային ուժից եւ հատկապես այն հանգամանքից, որ մեր բանակը այդ կռիվներում սկզբնական շրջանում պարտություն է կրել, կարելի է եզրակացնել, որ թուրք-քրդական զինուժը փոքրաթիվ չի եղել: Համենայն դեպս, Սուրմալուի գավառական կոմիսարի զեկույցում իրավիճակը այսպես է ներկայացվում.«**Տեղական բանակը իր քանակով անհամապատասխան է** (ընդգծումը մերն է- Հ.Հ.) բնակչության ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար: Մեր տրամադրության տակ կա երկու գումարտակ (Մուրադի եւ Ասլանի) եւ 2-րդ կամավորական գունդը, որը միասին կազմում է մոտ 1500 սվին, 70 հեծյալ եւ 4 թնդանոթ»[27]:

Ռազմական պատրաստությունների հետ մեկտեղ, թուրքերը գործի են դրել քարոզչական մեքենան, ինչին նրանք հմտորեն տիրապետել են իրենց գոյության ողջ ընթացքում: Հետագա մեր պատմությունն էլ ապացուցեց, որ հայ- թուրքական հարաբերություններում այս գործոնը եթե ոչ վճռական, ապա բացասական իր ազդեցությունն ունեցել է. «Թուրքերի մեջ ինչ-որ շարժում է նկատվում, եւ համառ լուրեր են պտտվում հայերի վրա պատրաստվող հարձակման մասին թուրք զինվորների մասնակցությամբ,- ասվում է Սուրմալուի կոմիսարի զեկույցներից մեկում: - **Դեպքերի այսպիսի դասավորությունը ճնշում է գործադրում ժողովրդի, մանավանդ զորամասի հոգեբանության վրա, որ մի թեթեւ հարվածը կարող է փախուստի մատնել թե՛ մեկին եւ թե՛ մյուսին** (ընդգծումը մերն է՝Հ.Հ.): Ուստի խնդրում եմ միջնորդել բանակը ուժեղացնելու համար, գրավել մոտակա բարձունքները եւ շարժվել դեպի Կողբ եւ այդպիսով ամրացնել Սուրմալուն: Հակառակ դեպքում, դրությունը վտանգավոր է: Կոմիսար Խաչատուր Բաբայան, քարտուղար Առաքելյան»[28]: Նույն կոմիսարի մարտի 23-ի զեկույցում իրադրությունը շարունակում էր գնահատվել սպառնալից. «Այսօր Դեւեկ - Դաղի» -ի շրջանում Կարակոյունլու գյուղի մոտ նկատվել է քուրդ-թաթարական ուժերի տեղաշարժ: Դրությունը տագնապալի է: Մեր ուժերը քիչ են: Սպասում են Ձեր հրահանգներին:

Հրահանգող. խոսել եմ շտաբի պետ Սեպուհի հետ, որը տագնապալի ոչինչ չի տեսնում: Ինչ վերաբերում է պահեստավորված պարենին, եթե վտանգը իրական եք համարում, ապա դուրս բերեք դրանք: Սակայն դա պետք է անել այնպես, որ խուճապի տեղիք չտրվի:

26 Անդ, թ.19:
27 Անդ, ֆ.201, գ.2, գ.612, թ.4:
28 Անդ, ֆ.201, գ.2, գ.612, թ.4:

Գավկոմիսար. Հակառակորդի ուժերի մասին ոչինչ հայտնի չէ: Բնակչությունը առայժմ կպած է իր բնակավայրերին»[29]:

Հետագայում միայն, Դրոյի՝ հայրենիք գալով, վիճակը փոքր -ինչ փոխվում է: Հայկական զորամասերին հաջողվում է գրավել թուրք-քրդական խռովության կենտրոններ դարձած Դեւեկ-Դաղը եւ Կարակոյունլուն. «Գնդապետ Մելիք Մուրադովի գունդը շարժվում է առաջ՝ Դաշբուրունին միանալու համար,- ասվում էր գլխավոր շտաբ ներկայացված զեկույցում: - Ամերիկյան ավտոմեքենաները բարեհաջող տեղ են հասել: Մարգարայի կողմից Դրոյի հրամանով հարձակում է սկսվել Գեոկչալո, Թոխանշալու, Բայաթ, Թոխանշալու-Կաջար գյուղերի վրա: Նպատակը Դաշբուրունը ամրացնելն է: Հրամանատարը Կարապետ Հասան-Փաշայանն է: Կարակոյունլուն շրջապատված է, կան թաթար գերիներ»[30]: Հաղորդագրությունը գրվել էր ժամը 11-ին:

Բարեբախտաբար, արխիվային փաստաթղթերը մեզ հնարավորություն են տալիս ժամ առ ժամ ներկայացնելու ռազմական գործողությունների ողջ ժամանակագրությունը: Ուստի մեզ մնում է արձանագրել, որ բեկումն այդ խնդրում հօգուտ հայկական ուժերի, տեղի է ունեցել 1919 թ. սեպտեմբերի 9-ին եւ կրկին ի շնորհիվ Դրաստամատ Կանայանի զորավարական տաղանդի. «07.09.1919թ. ժամը 18[00]: Դրոն Դաշբուրունում է, գրավել է թուրքական բոլոր գյուղերը: Տրամադրությունը բարձր է, դրությունը հաստատուն: Այդ ամենի մասին անձնապես զեկուցվել է Ռուբեն Տեր-Մինասյանին: Վերջինիս կողմից շնորհակալություն է հայտնվել: Դրոն էլ իր հերթին շնորհակալություն է հայտնել միլիցիոներներին»,- զեկուցում էր գավառային կոմիսարը[31]: Ի պատիվ ապարանցիների՝ նրանք այստեղ էլ միայնակ չեն թողել 1918 թ. մայիսյան հերոսամարտի իրենց հրամանատարին եւ կարեւոր մասնակցություն են ունեցել թուրք-թաթարական հրոսակախմբերից Սուրմալուի ազատագրմանը:

1919 թ. հոկտեմբերից գավառում հարաբերական խաղաղություն է հաստատվում: Թուրք - թաթարական կռիվների հետեւանքով գավառը լքած բնակիչները թեպետ դանդաղ, սակայն շարունակում էին վերադառնալ իրենց հարազատ վայրերը: Իհարկե, նրանց վերադարձը խոչընդոտող կարեւոր հանգամանքը, ինչպես հաստատում էր գավառակի կոմիսարը, «սերմացուի պակասն էր»[32]:

Մյուս կողմից, գավառի առջեւ ծառացած էր նաեւ թուրքաբնակ եւ քրդաբնակ գյուղերի բնակիչների վերադարձման խնդիրը: Իրականությունն այն էր, որ գավառի հայությունը դեմ էր իրենց այդքան թշվառություններ ու դառնություններ պատճառած եթե ոչ հասարակ բնակչության, ապա առնվազն վերջիններիս հայակեր պարագլուխների ու գործակալների վերադարձին: Արխիվային վավերագրերից մեկում, որն ուղղված էր Հանրապետության ներքին գործոց նախարարին, այդ մասին հստակ էր ասվում. «Սուրմալուի հայտնի դեպքերից հետո Թոխանշալու թուրքաբնակ գյուղի բնակչությունը հեռա-

29 Անդ, թ.10:
30 Անդ, գ. 67, թ.21:
31 Անդ:
32 Անդ, թ.23:

ցավ գյուղից: Կառավարության ներկայացուցիչները վերջերս զանազան խոստումներով նրանց փորձեցին եւ վերադարձնել իրենց բնակության նախկին վայրերը, եւ նույնիսկ այդպիսի 15 ընտանիքներ վերադարձան: Սակայն անցավ 10 օր եւ նրանք կրկին վերադարձան իրենց հայրենակիցների մոտ», - գրում էր գավառային կոմիսարը[33]:

Նրանք անցել են ոչ թե թուրքական տարածքներ, այլ Հայաստանի Հանրապետության Զանգիբասարի շրջանը: Եւ այդուհանդերձ, տեղի իշխանությունները ջանում էին գավառի մահմեդական բնակչությանը եւ բերել: Իսկ արեւմտահայության վերադարձի պարագայում թուրքերը ոչ միայն շահագրգիռ չէին, այլեւ բազում խոչընդոտներ էին հարուցում նման ցանկություն հայտնած հայերի դեմ, էլ չենք խոսում ֆիզիկական ոչնչացման սպառնալիքների մասին:

Սուրմալուի գավառի կոմիսարի զեկույցից տեղեկանում ենք. «Կապիտան Բեկզուրաբովի հետ միասին մոտեցանք Օրգովի ուղեկալին, որտեղ մեզ մոտեցան Օրգովի քրդերից մոտ քսան հոգի: Նրանք ասացին, որ ցանկանում են Իգդիրի հետ վերականգնել բարեկամական հարաբերություններ: Մեր իշխանությանը ենթարկվելու իմ հարցին նրանք պատասխանեցին, որ մեր դեմ ոչինչ չունեն, սակայն առանց գեներալ Շամշադինովի եւ Համիդ բեկ Շամշադինովի համաձայնության, իրենք ոչինչ ձեռնարկել չեն կարող»[34]:

Այս հանգամանքը հետագայում բավականին օգտագործվեց տեղի թուրք-թաթարական տարրերի կողմից, հաստատելով, թե հայերը ամբողջովին ավերել են իրենց գյուղերը: Խնդիրը նույնիսկ հասավ Փարիզի խաղաղության կոնֆերանս. հարցը քննության առարկա դարձավ Անգլիայի արտաքին գործոց նախարար Լորդ Քերզոնի կողմից, ինչը հաստատում է վերջինիս հետ հանդիպման մասնակից Ավետիս Ահարոնյանը.«Ձեր երեք շեֆերը,-ասել է Լորդը,-Դրո, Համազասպ եւ Գյուլխանդանյան, պարագլուխ եւ առաջնորդ են այն խմբերի, որոնք թաթար գյուղեր են ավերել եւ կոտորած արել Զանգեզուրում, Սուրմալուում, Էջմիածնում, Զանգիբասարում: Սա անհանդուրժելի է: Նայեցեք,- նա ձեռք առավ սեղանի վրայից մի ծալ պաշտոնական թղթեր- նայեցեք, ահա դեկտեմբերի մեջ (1919 թ.-Հ.Հ.), վերջին ամիսները օրավուր ինձ իմ ներկայացուցիչ Վանդրուպը հաղորդում է ավերված թաթար գյուղերի ցանկը: Թաթարական պաշտոնական զեկույցը խոսում է 300 թաթար գյուղերի ավերումի մասին: Սա ձեր դատին կարող է մեծապես վնասել: Լորդն այս ամենը ասում է գրեթե վրդովմունքով:

Պ. Նախարար, ասացի,- Ձեր մեղադրանքը չափազանց ծանր է եւ չափազանց վճռական: Ներեցեք, որ պետք եղած բացատրություն տամ: ...Ասեմ, որ ինքը պ. Վանդրուպը ցավալի թյուրիմացության զոհ է: Հիրավի, Ձեր հիշատակած վայրերում բնակիչներից թափուր գյուղեր կան, սակայն դա բնավ չի նշանակում, թե հայերն են ավերել այդ գյուղերը... Սուրմալուն իմ ծննդավայրն է եւ Էջմիածինը՝ նրան կպած, երկուսն էլ ճանաչում եմ մոտիկից: Ճշմարիտ է, այնտեղ կան թաթար գյուղեր բնակիչներից թափուր, բայց դա էլ իր ցավոտ պատմությունն ունի, որ համենայն դեպս ի վնաս հայերի բարի համբավի չէ: Երբ 1918-ին հայերի համառ ու հուսահատ դիմադրությունից հետո՝ թուրքերը կարո-

33 Անդ, թ.25:
34 Անդ, թ.34:

ղացան գրավել այդ գավառները, տեղական թաթարները ամեն տեղ հայերի ջարդեր կազմակերպեցին թուրքերի հետ: Հայերի մնացորդները խույս տվեցին Երեւան: Դաշնակիցների հաղթությամբ ու Կովկաս մտնելով՝ թուրքերը տեղի տվեցին եւ քաշվեցին մեր գավառներից եւ հայերի մնացորդները նորից դիմեցին դեպի Սուրմալու, ուր թաթարները քրդերի հետ նոր դիմադրություն ցույց տվեցին հայերի դարձին եւ ի վերջո փախան դեպի Ադրբեջանի հողը: Այսպես են դատարկվել Սուրմալուի թաթար գյուղերը: Նույնը կատարվել է Էջմիածնի գավառում: Մյուս կողմից, մեր հողի վրա գտնվող թաթար համայնքները շարունակ հուզումի ու դավադրության մասնակից եղան Ադրբեջանի կառավարության գրգռությամբ:

- Այդ փաստերն ինձ հայտնի են,- պատասխանեց Լորդը»[35]:

Իհարկե, ի վերջո հայկական ուժերին հաջողվեց կանգնեցնել թուրք-քրդական հարձակումները: Գավառային կոմիսարի 1920 թ. մարտի 26-ին թվագրված զեկույցում նշվում էր, որ «Հակառակորդը հարձակում է գործել Կարակոյունլուի մեր դրիքերի վրա: Մեր ուժերը համալրում ստանալու շնորհիվ նրանց ետ են շպրտել: Ժամը 7-ին մեր հեծելազորը առանց մարտերի մտել է Դաշբուրուն: Մեր ուժերի կորուստը կազմում է 7 զինվոր եւ 15 վիրավոր»[36]: Իհարկե, թուրքերը եւ քրդերը 500 հոգիանոց մի ջոկատով եւս մեկ անգամ փորձ են անում ետ իյել կորցրածը, սակայն հայկական ուժերի ճնշման տակ նահանջում են: «Տրամադրությունը մարտական է»,- ասվում էր գավառային կոմիսարի զեկույցում[37]:

Արեւմտյան Հայաստանից հետո Սուրմալուն Արեւելյան Հայաստանի այն ոչ եզակի գավառներից էր, որ վերածվեց ազգային-ազատագրական պայքարի մարտական օջախի: Սակայն, այստեղ էլ նույն պատկերն էր, ինչ Արեւմտյան Հայաստանում. «Այժմ բոլորը զենքի տակ են, միայն թե հրացան լինի,-ասվում էր Սուրմալուի գավառային կոմիսարի զեկույցում: - Ես անցա բոլոր հայկական գյուղերով եւ կազմակերպեցի ինքնապաշտպանությունը: Նրանք բոլորն էլ մասնակցել են կռիվներին: Միակ խնդրանքս է՝ հրացան եւ փամփուշտ տվեք, եւ ես բոլորին ոտքի կհանեմ: Ջաֆարաբադ գյուղը, որ մենք գրավել էինք, վառվեց Դաշբուրունից հեռանալուց հետո: Ինչ վերաբերում է թշնամու կորուստներին, ապա դրանք զգալի են»[38]: Սակայն դա այն ժամանակ, երբ արդեն սկսվել էր... թուրք-հայկական պատերազմը:

Այսպիսին էր իրավիճակը Սուրմալուում: Նման իրավիճակ էր Հայաստանի գրեթե ողջ տարածքում, ապրում էին նույն հոգսերով ու ցավերով:

---

35 **Ավետիս Ահարոնյան,** Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան (քաղաքական օրագիր), Երեւան, 2001, էջ 80-81:

36 Անդ, թ.5:

37 Անդ, թ.7:

38 Անդ, թ.41: